ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, Ֆաքս /факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N 02/22/18774-2026

mediaforedu.am տեղեկատվական-վերլուծական կայքի խմբագիր
**ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ**
**Էլ.փոստ՝** mediaforeducation.ngo@gmail.com

*Ի պատասխան Ձեր՝ 24.05.2026. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ուղղված հ. 2011441 հարցման*

**Հարգելի՛ Անուշ Մարտիրոսյան,**

1.Աշխատանքային ժամերին և ուսումնական գործընթացի ընթացքում քաղաքական քարոզարշավի դեպքեր են արձանագրվել ՀՀ Արագածոտնի մարզի Արագած, Քուչակ և Բերքառատ գյուղերի հանրակրթական դպրոցների մանկավարժների և սովորողների մասնակցությամբ:

2.Մայիսի 12-ին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններին ուղարկվել է շրջաբերական գրություն, որով շեշտադրվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն և քաղաքական քարոզչություն: Միաժամանակ հստակ սահմանվել է, որ հանրակրթական ուսումնական

հաստատություններում աշխատող այն անձինք, որոնք ընդգրկված են որևէ քաղաքական կուսակցության նախընտրական ցուցակում, նախընտրական քարոզարշավի ընթացքում իրավունք չունեն համատեղելու իրենց մասնագիտական պարտականությունները:

**3.**Վերոնշյալ խախտումների կապակցությամբ նշված դպրոցների տնօրենների նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ հայտարարվել է խիստ նկատողություն, իսկ արձանագրությունները ուղարկվել են համապատասխան իրավապահ մարմիններին, որոնք դեռևս ընթացքի մեջ են:

Восстановимая подпись

X 

ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ

Подписано: SVAJYAN ARAKSIA 6304780168

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

*Կատ.՝ Հանրակրթական և արտադպրոցական հաստ. համակարգման բաժնի մասնագետ՝ Ա.Ղուկասյան 010599699(610),*
*Տեղեկատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ.Բադոյան, 010599699(612):*